

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 «Բասենի Գոլք» ՍՊԸ
 առ 31-ը դեկտեմբերի 2020թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ

	Մանրագրություններ	31/12/2020 Դր 000	31/12/2019 Դր 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	851,743	626,389
Ոչ նյութական ակտիվներ		522	72
Հետաձգված հարկային ակտիվներ	19	1,725	1,139
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		853,990	627,600
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	466,376	617,301
Առևտրական և այլ դերիտորական պարտքեր	8	33,439	49,682
Գերավճար շահութահարկի գծով		7,739	-
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ	9	68,325	123,650
Տրված փոխառություններ	10	8,767	8,767
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	350,750	171,823
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ		687	3
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		936,083	971,226
Ընդամենը ակտիվներ		1,790,073	1,598,826
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	12		
Կանոնադրական կապիտալ		50	50
Զբաղիված շահույթ		97,596	86,669
Ընդամենը սեփական կապիտալ		97,646	86,719
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	1,349,545	1,127,665
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,349,545	1,127,665
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	14	327,082	356,755
Պարտավորություն շահութահարկի գծով		-	6,102
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	9	6,214	15,259
Աշխատակիցների կարճ. հատուցումների գծով պարտքեր	15	9,586	6,326
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		342,882	384,442
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,790,073	1,598,826

10-ից 34-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
«Բասենի Գոլք» ՍՊԸ

2020 թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթ ազդույթ ունենք	2020	2019
		Դր 000	Դր 000
Հասույթ	16	4,246,030	3,951,183
Ինքնարժեք	17	(4,003,337)	(3,698,326)
Համախառն շահույթ		242,693	252,857
Այլ եկամուտներ		3,593	2,895
Իրացման ծախսեր	18	(180,809)	(147,209)
Վարչական ծախսեր	19	(68,687)	(55,675)
Այլ ծախսեր		(2)	(1,210)
Գործառնական շահույթ (վնաս)		(3,212)	51,658
Ֆինանսական ծախսեր		(4)	(11)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)		13,854	(24,889)
Շահույթ մինչև հարկումը		10,638	26,758
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	20	289	(12,314)
Տարվա շահույթ հարկումից հետո		10,927	14,444
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Մեփական կապիտալում ճանաչված օգուտներ (վնասներ)		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		10,927	14,444



Գլխավոր հաշվապահ



ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 4ա
4a Leningradyan 4a, Yerevan, RA
www.gaudit.am, info@gaudit.am

ԱՆԿԱՆ ԱՌԻՂԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բասենի Գովք»

սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բասենի Գովք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով ձևափոխման հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Ընկերությունը չի գնահատել ստացված անտոկոս փոխառությունների իրական արժեքը, զեղչված բոլոր ապագա դրամական հոսքերի ներկա արժեքով՝ օգտագործելով համանման պարտքային վարկանիշով համանման գործիքների (համանման՝ արժույթի, ժամկետի, տոկոսադրույքի տեսակի և այլ գործոնների տեսանկյունից) համար շուկայում գերակշռող տոկոսադրույքները: Մա ընկերության ղեկավարության կողմից ընդունված որոշման արդյունք է, որը մեր կարծիքով չի համապատասխանում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի (Բաժին 11) պահանջներին: Ստացված անտոկոս երկարաժամկետ փոխառությունների չզեղչված մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,349,545 հազար դրամ:

Մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար քանակի համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի հաշվետվությունում արտացոլված 327,082 հազար դրամ առևտրային կրեդիտորական պարտքերի ճշտության մեջ հանդգնելու համար և անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ էր նշված գումարի հետ կապված որևէ ճշգրտում կատարել:

Այլ հանգամանք

Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն,

միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր

Լ. Պողոսյան

«30» հունիսի 2021թ.

Երևան

